ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» ապրիլի 2014 թվականի № 07-Ն

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի 2014 թվականի վարչական բյուջեի եկամտային մասում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրված դոտացիայի ճշտված գումարը կազմում է 10183.9 հազար դրամ՝ 10184.1 հազար դրամի փոխարեն: Պակասեցված 200 դրամ գումարը եկամտային մասում ավելացնել աղբահանության տեղական վճարին, որը կկազմի 2364.2 հազար դրամ 2364.0 հազար դրամի փոխարեն:
2. Համայնքի ավագանու 02.12.2013 թվականի թիվ 10 որոշմամբ հաստատված 3000 դրամ տեղական վճարի փոխարեն սահմանել 2700 դրամ՝ երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց:
3. Աշխատանքի անհրաժեշտությունից ելնելով պահուստային ֆոնդից պակասեցնել 855.0 հազար դրամ և նույն գումարի չափով ավելացում կատարել հետևյալ ծախսային հատվածներին.

ա/ 06-3/1 հատվածի 426.9 հոդվածին ավելացնել 500.0 հազար դրամ, խմելու ջրագծերի նորոգման համար նպատակային նյութեր ձեռք բերելու նպատակով:

բ/ 01-1/1 հատվածի 4252 հոդվածին ավելացնել 355.0 հազար դրամ՝ գյուղապետարանի սարքավորումների նորոգման նպատակով:

4.Ֆոնդային բյուջեի 06-2/1 հատվածի 5133 հոդվածից պակասեցնել 500.0 հազար դրամ և նույն գումարի չափով ավելացնել 04-5/1-ի 5113 հոդվածին՝ համայնքի Կենտրոնական 2-րդ փողոցի մասնակի ասֆալտապատման համար:

Ավագանու անդամներ

կողմ (6)　　դեմ (0)　　ձեռնպահ(0)

Գրիգորյան Կարապետ
Կոստանյան Հովհաննես
Մուրադյան Արթուր
Սարգիսյան Մուշեղ
Սահակյան Կարեն
Մարգարյան Տիգրան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝　　Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Արգավանդ համայնք, Կենտրոնական 2-րդ փողոց թիվ 5
Հեռ. 091-43-73-38, e-mail: argavandhamaynk@rambler.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» ապրիլի 2014 թվականի № 08

ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 02.12.2013 ԹՎԱԿԱՆԻ «ԱՐԳԱՎԱՆԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2014 Թ. ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 25 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Արգավանդ համայնքի ավագանու 02.12.2013 թվականի «Արգավանդ համայնքի երաժշտական դպրոց ՀՈԱԿ-ի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց 2014 թվականի գանձվող վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 25 որոշման մեջ «ա» ենթակետում «3000» թիվը փոխարինել «2700» թվով:

Ավագանու անդամներ

կողմ (6) դեմ (0) ձեռնպահ(0)

Գրիգորյան Կարապետ
Կոստանյան Հովհաննես
Մուրադյան Արթուր
Սարգիսյան Մուշեղ
Սահակյան Կարեն
Մարգարյան Տիգրան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ